


200ա. Յովհաննէս՝ Թղ. 201ա—263բ: Նախադրութիւն չունին:

Թղ. 264 եւ Թղ. 265 կրկնադիրներուն վարի երեսները, ինչպէս նաեւ Թղ. 266ն ու Թղ. 267ը, կը կարծուին ըլլալ մասեր սրբոց վկայարանութենէ, հետեւցնելով մեծ դժուարութեամբ եւ լուսանկարումի օգնութեամբ հազիւ կարողացուող քանի մը կցկտուր բառերէ (ինչպէս՝ Թղ. 265բի մէջ. — «... պատասխանի ետ սուրբ... եղբարք աւատլ այլ եւս այս աւետեալ... յաքանէ ով

Այս ընթեռնուն աւետարանք սկսեալ ի գատկեմ մինչեւ ցնոր առաւուտուն»: Հաւանաբար տողերս կը ծառայեն իբր մաս Աւետարանացոյցի:

ՅԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹԻՒՆՅ. 1. Թղ. 200բ. Բուն գրչինը, գրուած Ղուկասու աւետարանէն վերջ մնացած պարագ տեղը, վերոյիշեալ աւետարանացոյց հատուածի վարի կիսուն, 10 տող, որմէ մեծ ճիւղերով եւ դժուարութեամբ կը կարդացուին միայն.

«Շնորհիվ ամենակալին Աստուծոյ կատարեցալ ավետարան



2. Նկար:

նոցա... մեկ եւս ոչ ել զանդր ութ ի բնա... արխիոնէ նոցա եւ մեր... աւարովք որ բեր...» եւայլն. Տես նկար 1 (էջ 83—84):

Թղ. 200բ ճակատը՝ Ղուկասու աւետարանի սրբուած վերջամասին վրայ (վարի երես) վերագրուած է վերջէն անինամ բորբոքիբով՝ տասը տողի չափ՝ հետեւեալը (վերին երես), մասամբ ընթեռնելի՝ երկրորդ տողէն սկսեալ. «... խոչ կար եւ որդի մարդոյ առ: Վերջ... նանու: ծը: այս են կամք: վերջ... երկոտասան յոհաննու ճլք: զայս հաւանցեալ ընդ ձեզ միջ... Ղուկասու: խղ: ել ի լեառն կալ աղաւթն: վերջ Ղուկասու: իլ: իբրեւ տիւ եղեւ ել գնաց. վերջ. գնաց... մաթեոսէ: ճկղ: ելեալ յս ի կողմանս: վերջ. զ... Ղուկասու: զը. բայց արդարեւ ասեաց: վերջ: ...»

ս. ի թվականութեանն Հայոց ՆժԵ. Զգրողս սորա յիշեալիք. Եւ Աստուած յիշողացտ ողորմե(ս)ցի ամեն... Եւ ողորմեա՛ կիրակոս երիցոյ... ծնողացն (անընթեռնի)»

(Տես նկար 2:)

2. Թղ. 264ա—265բ. Նոր՝ վերակազմողի յիշատակարանը ԶՂԸ (= 1346) թուականէն, երբ մատենան ինկած թերթերու տեղ նոր լրացումներ ունեցած է.

«Փառք եւ պատիւ հաւր անծնին անեղ աներր իսկականին: Եւ միածնի նորա բանին: Անճառ ծննդեանն հայրենին: Եւ սուրբ հոգւոյն շնորհատուին, եւ ի նոցունց միշտ

ելողին եւ զարարածս լցողին: Կատարողի արարածին: Ի յայժմոյս եւ յազազային. եւ յանսպառ յաւիտենին ամէն:

Արդ ցանկացող եղեալ այսմ լուսերանք եւ վարդալիթիթ հողէնորոգ բու(ր)աստ(ան)իս. քառավտակ դետոցս, եւ աստուածարան սուրբ աւետարանիս պատուելի այրն Աստուծոյ Խորով շահն, եւ ետ զսա վերստին նորոգեալ, զոր տէր Աստուած նորոգեաց զմանգութիւն նորա. ամէն: Ի նեղ եւ դեպք զմանգութիւն նորա. ամէն: Ի նեղ եւ դեպք թէողաւաւելիս, անսպառ եղեւ ի մարդոց, եւ անասնոյ ի յողզէն Հաքարու եւ Իսղոյ, եւ անասնոյ ի յողզէն Հաքարու եւ Իսղոյ, մայէլացոցն: Նաեւ արեւելեանքն ամենայն, եւ տուն վրայ. որ յոլովք ի սուր սուսերի մաշեցան եւ այլք ի սովոյ մեռանէին. որ ոչ ոք կարէ պատմեալ զանցս աղետիցս զոր եկն ի վերայ ազգիս քրիստոնէից եւ այն վասն ի թաղուած յաճախ մեղաց մերոց: Որ բազում առաւել յաճախ մեղաց մերոց: Եւ ոչ խարհիկ շրջին ի հայրենի դաւառաց: Եւ ոչ ի նէր աւգնական, զի հասարակաց էր վիշտն սովոյ եւ տաղնապն յանաստուած ազգէն: Որպէս եւ երուսաղէմացոյն առ բաբելոնաւն: Լուր Երեմիաս պիտէր որ լայր զանըմբոնելի վիշտս քրիստոնէից: Եւս առաւել զազգիս Հայոց:

Արդ՝ աս՝ զայս ամենայն յոչինչ համարելով ստացաւ զսա զաւակ ի Սիրոն. եւ սանրելիք ելից վերնոյ քաղաքին Երուսաղէմի: Եւ զղեակ ապաւինի, ի հնարից եղեռնագործին, եւ նաւ ուղղակի անցուցանել ընդ ամեհի ալեացն կուտակաց ի ծիմանէ ալեկոծութեան կենցաղոյս հասանելով ի նաւահանգիստն աւանցուցն Գրիստոս: Եւ աստեացն ի վարժունքն ուսումնասիրաց: Ի յիշատակ իւր եւ եղբաւրն իւրոյ Շիրին շահին եւ ծնողացն Ումեկին եւ թագուհէ պարոն շահին եւ սիրատիկնայ փոխեցելոցն ի Քրիստոս: Զոր տէր Աստուած բարձակից արացէ գնոսս նահապետին Արրահամու. ամէն:

Արդ եղեւ վերջին նորոգումն սուրբ աւետարանիս ի թուականութեանն Հայոց ԶՂԵ: Ի գաւառիս խաղտեաց, ի յանառիկ զղեակիս որ կոչի բարերդ, ձեռամբ սուտանուն սարկաւազի Յոհաննէս Նահաշի եւ կազմողի: Առ դրան սրբոյ Աստուածածնիս: Եւ սրբոց Հրեշտակապետաց: Ի Հայոց վերայ դիտողութեան. տեառն Միսիթարեա՛. եւ ի հայրապետութեան այսմ գաւառիս տէր Սահակայ եւ տէր Ստեփաննոսի: Եւ ի թաղ. Հայոց Կոստանդին եւ զարարածս լցողին: Կատարողի արարածին: Ի յայժմոյս եւ յազազային. եւ յանսպառ յաւիտենին ամէն:

տանդի: Եւ ի յանութեան աշխարհին Հոռմայ Յարաթնային որ էր այր բարեպաշտ: Զի յոլովք ի յաշխարհի նորա ընուին հացիւ զսովեալ անձինս, զոր տէր Աստուած յերկար աննէ զպետութիւն նորա. ամէն:

Արդ, որք աւելիք ի սմանէ քահանայք. եւ ժողովուրդք յորժամ աւելիք ի սմանէ. յիշեալիք ի սրբութաց. եւ ի մաքրամատուց աղաւթս ձեր. զբարեմիտ այրն զԽորով շահն. եւ զայլ ամենայն համացեղս իւր. զվերոյդերեալն: Եւ Քրիստոս յոյսն ամենեցուն. որ առատ է ի տուրս պարգեւացն: Յիշողացդ եւ յիշելոցս ողորմեացի առ հասարակ: Եւ նմա փառք յաւիտեանս. ամէն»:

Հմմտ. Յ. Քիւրտեան, Հանգ. Ամս., 1926, էջ 344—345: Նոյն՝ Մասիս Տարեգիրք, 1935, էջ 191: Նաեւ՝ Պրոֆ. Պ. Յոնէֆ «Յուցակ Ձեռագրաց եւ Հնատիպ մատենից Ազգ. Մատենադարանի ի Սոփիա» (Проф. Б. Цоневъ, Описание на Ржкописитѣ и Старопечатнитѣ кничи на Народната Библиотека въ София), Սոփիա 1910, Թ. 580/163, էջ 517: Ն. ԳԱՍԱԳԵԱՆ

ՆԵՐՍԻՍԻ ՏԱՐՈՆԻ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ Ի ԲԱՆ ՏՆՏԵՍԻՆ*

Եւ ասէր առ աշակերտսն, այր մի էր մեծատուն, որոյ էր տնտես: Եւ եղեւ զնմանէ ամբաստանութիւն. որպէս թէ վատնիցէ գինչս նորա: Ըստ կարգի առակքս այսոքիկ՝ եւ զորութեամբ խորհրդոյ ունին առ միմեանս զյարմարումն երեքեանս: Նախ՝ անառակ որդւոյդ, եւ որ տնտեսիս է, եւ մեծատանն: Քանզի անդ ցուցաւ շնորհօք թողութիւն տուեալ հաւատացելոց՝ եւ ի Քրիստոսի, որ վասն մեր կամաւոր մահուանէն, որք եւ անդէն սկսեալք միաբանութեամբ եղեւ եկեղեցի սուրբ ընդ ամենայն տիեզերս գումարեալ յանունն Քրիստոսի, յորում են տնտեսք զանազան սպասաւորութեամբ, եւ նախ հոգւոյ

* «Հանգէս Ամսօրեայ» ի մէջ լոյս տեսան Ներսէս Լամբրոնացոյ «Ներքողեան ի վերափոխումն Աստուածածնի» (1925, էջ 355 եւ 442) եւ «Ճառ յանառակ որդին» (1928, էջ 120 եւ 311): Իսկ այսօր հնարաւորութիւն կը տրուի ինձ սոյն Ուսումնաթերթին մէջ տպագրելու նոյն Հայրապետին «Ի բան տնտեսին», որմէ արտագրութիւններ կան իջմիածնի եւ Չմմառի եւ ուրիշ Մատենադարաններու ձեռագիրներու մէջ: Հրատարակութիւնը կ'ըլլայ Երուսաղէմի Ս. Յակոբիանց վանքի Թ. 154 ձեռագիրի վրայէն: Դժբախտաբար ձեռագրին զրիչը լաւ բնագիր մը աչքին առջեւ չէ ունեցած եւ բաւական տեղեր միջին կը մնան: Կիտաղրութիւնը՝ խեղճ:

այցելուք, զորս զգուշացուցանէ Պօղոս, զի
 զիտասցես թէ ո՞րպէս պարտ է քեզ՝ ի տանն
 Աստուծոյ շրջել որ է եկեղեցի Աստուծոյ կեն-
 դանոյ, ի դէմս որոց եւ առ աշակերտան
 դարձուցանէ զբանն իբր ի նախասկիզբն՝ զոր-
 ծոյս: Որոց եւ ասէ Քրիստոս, ո՞վ իցէ իմաս-
 տուն տնտես, զոր կացոյց տէր ի վերայ ծա-
 ոայից իւրոց տալ ի ժամու կերակուր: Են
 եւ մարմնոց իշխանք՝ Աստուծոյ հրամանի
 սպասաւորք, ըստ այնմ Աստուծոյ սպասա-
 ւոր է վրէժխնդիր ի բարկութիւն այնմ որ
 զհարն գործիցէ: Տնտես է իւրաքանչիւր ոք
 իւրում անձին, զի գնեցայք ասէ եւ չէք ան-
 ձանց տեարք, փառաւոր արարէք զԱստուծո
 ի մարմինս ձեր եւ յողիս: Արդ կամի այսու
 առակաւ Քրիստոս յոյս դնել իւրաքանչիւ-
 րոցս ապաշխարութեան, զի սրբեալք արեամբ
 նորա՝ եւ մկրտութեանն դաշամբք, յորդե-
 գրութեանն պայման վերացեալք եւ եկեղեց-
 ւոյ ժառանգք եղեալք, եթէ ըստ մարմնոյ
 տկարութեան ի գայթակղեցուցանող թշնամ-
 ւոյն կործանեցին: Դարձեալ՝ ի հաւատոյ
 մոլորումն, կամ ի գործոց վատթարութիւն,
 մի գոյս բժշկութեանն հատցեն կամ յառա-
 ւել տրտմութենէն ընկղմեցին: Այլ այսու
 հանձարով փութացեալք առ փրկութիւնն,
 առցեն զգովութիւն հողանիւթ բնութիւնն,
 որով յառաջ գտան քան զորդիս լուսոյ ի փոթ
 նորոգման: Եւ առնու զբանս՝ ի դէմս այնր՝
 որ ի լրումն հասեալ պարտուց յանցանաց՝
 ըստ հողոյն եւ մարմնոյ: Զի որոյ թեթեւ
 պատահէ՝ եւ իմասնաւոր² յանցանելն, հայե-
 ցեալ ի սոյն բարեյոյս կացցեն: Արդ նա՝ որ
 մեծն է տէրութեամբ, եւ մեծ է զօրութիւն
 նորա. եւ փառօք լի է յատակ երկրի՝ եւ յար-
 կեալ ձեղուն երկնից: Ի տուն մեծութեան
 իւրոյ՝ յեկեղեցի սուրբ, ունելով զնախայիշա-
 տակեալսդ տնտեսս ի սոցանէ, որք ի ժամու
 ետուն ծառայակցացն զկերակուր, երանելիք
 գտան. զի առնելովն, եւ ուսուցանելովն՝ մեծ
 կոչեցան յարքայութիւն նորին: Իսկ որք ի
 բարեաց գործոց՝ եւ ի հաւատոց հեղգացան,
 ամբաստանին նախ՝ ի սպասաւոր հրէշտա-
 կացն, որք զաղօթս արդարոցն տանին առաջի
 երկնաւոր Հօրն, զի յայտնեն զսորա մոլո-
 րումն: Նա՝ եւ զրկեալն ի նոցանէ ազազակէ
 եւ բողոք հնձողացն՝ ելանէ ախանջս Տեառն
 զօրութեանց. յետ այսր՝ եւ ինքն առ իւր կրէ
 անպատկառ ոտիս զմտացն խիղճ, յորոյ զգու-

¹ Բն. ի խա սկիզբն:
² Բն. իմասաւոր:

շացուցանէ Քրիստոս, ի ճանապարհի տալ
 զհաշիւն. եւ Յովհաննէս զրէ, սիրելիք՝ եթէ
 սիրտք մեր ոչ ստգտանիցեն զմեզ՝ համար-
 ձակութիւն ունիմք առ նա. ապա յայտ է.
 թէ յըստգտանելն, որ քննէ զսիրտս եւ զե-
 րկամունս լսէ: Իսկ ի դէմս ընչիցն, յիշեմք
 զառաքելոյ ասելն, զի նչ ունիս՝ զոր ոչ իցէ
 առեալ. նա՝ եւ վասն վերակացուաց ասէ,
 թէ որք ենն, յԱստուծոյ են կարգեալ. յի-
 րաւի ուրեմն՝ ամբաստանեցաւ սա՝ աս-
 տուածայնոցն վատնող, որոց՝ կարգեցաւ
 մատակարար ընդ քննութեամբ, եւ ոչ անձն
 իշխանութեամբ տիրող: Կոչեաց եւ ասէ
 ցնա. զի նչ է այս՝ զոր լսեմս զքէ՞ն, տուր
 ըզհամար տնտեսութեան քո, զի ոչ եւս՝ կա-
 րես լինել տնտես: Այս կոչումն թուաց՝ ընդ
 մեզ մեկնութեան, ոչ ի հըրաւէր մահուն զոլ՝
 եւ ժամանակ կատարման կենացն, առ որ ոչ
 հաւանել պատճառ տարադէպ եւ զանազան
 վճարման ներքոյ մտեալ զքնութիւնս մեր
 ունելով. զի ոմն՝ ի սրոյ մեռանի, այլք ի ծով
 ընկղմին. այլք յանկարծակի, կէսք յախտն
 խելագարին: Եւ ոչ առնուն յայսպիսի դա-
 տաստան պարապումն, կամ ի ստրջանօք
 խոստովանութիւն, եւ որ ի Քրիստոսէ յոյս
 հասարակաց տուաւ առ որ մի լիցի ումեք
 պատճառել զանկարութիւն: Արդ կոչի մե-
 դաւորն յապաշխարութիւն, որով եւ զովի,
 ոչ ի ժամ վախճանին, այլ յորժամ ի սրտէ
 իւրմէ ըստգտանի, եւ խոկայ՝ ամենայն իրօք
 ի վախճանն, յորմէ չիք հնար ճողոպրել.
 որով ըմբռնելն՝ զիտէ զի մեղաւորացն՝
 սպառնացեալ է գեհնն եւ տանջանք. եւ յայս-
 պիսի մտածութիւնս զեղերելով, զարթչի ի
 թմրութենէ ախտիցն. կամ ի մարմնոյ փոր-
 ձանաց խեթկէեալ (sic), կամ ի զրոց վար-
 դապետութենէ. կամ յԱստուծոյ խնամոցն
 ազղմանէ: Եւ այս է կոչումն, փութալ ի
 մոլորութենէ ախտիցն զալ առաջի Աստու-
 ծոյ, եւ զայս առնէ ի սկզբանն, ոչ ազատու-
 թեամբ ըստ սիրոյն, որով սուրբքն հպին
 առ Աստուած. այլ ծառայական բռնութեամբ.
 եւ մահուն երկիւղիւ, զի անձաշակ է ի հեշ-
 տութենէ սիրոյն, եւ ձղէ յախտիցն կործան-
 մանէն արտաքս, սպառնալեաց դատաստա-
 նին քննութիւն եւ համար. ըստ որում ասէ.
 Տուր զհամար տնտեսութեան քոյ, զի ոչ եւս
 կարես լինել տնտես: Ինքն ի զարթչելն,
 զիտէ ամենայն իրօք զայս առ ինքն ասացեալ,
 մահուն կոչմամբ, եթէ այսօր՝ եւ եթէ վա-
 զիւն. արդ որպէս համար տալոյն ժամանակն՝

ոչ է արդէն, այլ առ յապա. նոյնպէս՝ եւ կո-
 չումնն, ոչ է ի ժամ ողէվարին, այլ յորժամ
 ի մահուն խոկումնն դառնայ ըստ ասողին՝
 ահա չափով եղիր զաւուրս իմ եւ զկար զօ-
 րութեան՝ որպէս զոչինչ. քանզի ընդունայն
 է ամենայն մարդ մսեղի: Ասէ ընդ միտս
 իւր տնտեսն. զի նչ գործեցից, զի տէր իմ
 հանէ գտնտեսութիւնս, գործել ոչ կար-
 րեմ, մուրանալ՝ ամաչեմ: Նախ՝ տէրն կո-
 չեաց, եւ ապա սա զայս խոկաց քանզի նախ՝
 մահուն կոչմամբ վճիւր՝ արդար իրաւանցն
 սահմանեցաւ ի վերայ. եւ քննութիւն իւրա-
 քանչիւր գործոց. եւ ապա է մեզ ի հողս
 պարապեալ՝ այնր պատասխանատուութեան.
 վասն այսր սա՝ որ ծանրասրտութեամբ սի-
 րէր զնանրութիւն, ոչ եկաց ի նոյն ի սպառ,
 այլ հաւանեցաւ ասողին. որդիք մարդկան՝
 մինչեւ յե՞րբ էք ծանրասիրտք: Եւ նախ՝
 խոկայ, թէ մեռանելոց եմ, եւ ապա թէ ի
 մահունն՝ քննութեան ատենի եմ մատնեալ,
 ըստ ամենայն գործոց. վասն որոյ՝ եւ ասէ.
 տէր իմ հանէ զմարմնական կենացս սպասա-
 տէր իմ հանէ զմարմնական կենացս սպասա-
 տուրութիւնն յինչն, եւ վըճիւր մահուն՝ որ-
 կայ հասարակ բնութեանս՝ ինձ ի վերայ
 կայ. ի զնալն աստի անդ՝ գործել ոչ կարեմ
 պակասեալ ի մարմնոյս օժանդակութենէ.
 զի այս է ժամանակ ընդունելի՝ եւ օր փրկու-
 թեան՝ զիւրք սուրբք ասացին. եւ սա՝ ի նո-
 ցանէ լուեալ՝ հաւատայ, թէ անդ ոչ կայ ա-
 պաշխարութիւն, յորում ոչ Աբրահամ մե-
 ծատանն ողորմէր. նա՝ որ ի մարմնի զոլով՝
 այնքան եցոյց Սողոմոնացոցն զվշտակցութիւն.
 եւ մուրանալ՝ ամաչէ. լուեալ զյիմար կու-
 սանայն, զորս զթութիւնն Աստուծոյ՝ ոչ
 զիտաց ի բախելն: Բայց եւ ամաչէ մուրա-
 նալ, զատեալ ի խղճէ մտացն՝ ոչ արժանի
 զանձն ողորմութեան յարդարադատ վճռէն,
 քանզի արդարեւ՝ ամօթ է՝ յայսքան դատախա-
 րակութիւն սուրբ զրոց խրատուք՝ եւ ապա-
 ցուցիւք յամառեցելոյն անդ ողորմութիւն
 խնդրել: Գիտեմ զինչ արարից, զի յորժամ
 ի բաց լինիցիմ ի տնտեսութենէս, ընկալցին
 ի տունս իւրեանց: Զայս իմաստս, ոչ
 զիս ի տունս իւրեանց: Զայս իմաստս, ոչ
 եթէ բնութեամբ զիտեմք, այլ յայնմանէ ու-
 սեալք՝ որ ասաց. ոչ կամիմ զմահ մեղաւո-
 րին, այլ զզառնալ նորա ի չար ճանապար-
 հէն՝ եւ զկեալն. ըստ այսմ յուսոյ հնարի զա-
 պաշխարելն. եւ տունս յոքնակի անուամբք,
 զօթեանան անուանէ, որ սրբոցն է պատ-
 րաստեալ, զի ըստ գործոցն՝ զանազան է՝ ա-
 ռաւելութեամբ եւ նուազութեամբ. արդ ասէ,

թէ առաջին օթեանին՝ ոչ լինիմ արժանի,
 երկրորդին, կամ միում ի բազմացն, ըստ
 գործոց իմ փոքրկութեան: Եւ կոչեցեալ առ
 ինքն մի ըստ միոյն՝ ի պարտապանաց տեառն
 իւրոյ. ասէ ցառաջինն, քանի՞ ինչ պարտիս
 տեառն իմում. եւ նա ասէ, հարիւր մար ձի-
 թոյ. ասէ ցնա. կայ զգիր քո՝ եւ նիստ զրեա
 վաղվադակի յիսուն. դարձեալ՝ ասէ ցմիւսն.
 դու՞ քանի՞ ինչ պարտիս. եւ նա ասէ. ձ քոռ
 ցորենոյ, եւ նա ասէ ցնա, կայ զգիր քո, եւ
 նիստ զրեա վաղվադակի Զ: Երկու պարտա-
 պանք՝ ընդ վերակացութեամբ կամացն է,
 բանական հողիս, եւ զգալի մարմինս, որոց
 եւ նա կառավար է, եւ ասէ, զոր ասէն Պօ-
 ղոս, հաճեալ եմ ընդ օրէնսն Աստուծոյ ըստ
 ներքին մարդոյս, որ եւ իւր հաճելովն պար-
 տաւոր գտանելն, անազան ուրեմն՝ քննու-
 թիւն անել կոչէ, որ եւ ասէ ցառաջինն,
 քանի՞ ինչ պարտիս տեառն իմոյ: Ասէ ցնա,
 ձ մար ձիթոյ, առաջին է միտքն, եւ բանա-
 կանազոյն խոկումն. որ եւ շարժէ զմարմինն
 ի գործ, որոյ՝ եղ օրէնք Քրիստոս, ոչ բար-
 կանալ տարապարտ, ոչ մթերել ոխս, ոչ
 հայել ցանկութեամբ, ոչ ամբարտաւանել,
 ոչ ունել չար գանձ եւ բղխել զնոյնն, նա եւ
 լրապէս ինքն թուեաց՝ եւ ասաց, ըստ կարգի
 զարտաքս ելեալս ի սրտէն՝ խորհուրդս չարս:
 Արդ սա՝ ամենայն օրինացս որ մտացն է
 արտաքս գնացեալ, պարտական էր, եւ բար-
 կութեան, եւ ցանկութեան, եւ մախանաց,
 եւ ամբարտաւանութեան, եւ որոց ընդ սոքօք
 բերին, առ որս՝ ասէ, թէ ի հարիւրէն՝ զրեա
 զՄն, այսինքն, թէ թոյ ի բղխելոյ ի քէն՝ ով
 սիրտ զամենայն շարութիւնս, զոր սովորեալ
 ես բղխել, եւ ի կէսն դադարեալ: Որպէս զի
 ես՝ յառաջին սկիզբն ապաշխարութեանն,
 զկիտոյ յանցանացն կալացց զրեոն, պակա-
 սեցո ի մախանացն, նուազեցո ի բարկու-
 թենէն, չափեա զցանկութիւնն, եւ զայլսն,
 եւ ձէթ³ կոչէ զհողեւորական. կիրսն վասն
 թափանցիկ էութեանն, եւ լուսոյ նիւթ լինե-
 լոյն արծարծ(ա)մամբն: Իսկ մարմին պարտի՝
 ձ քոռ ցորենոյ, զի մարմնոյս է նոյնն կիրար-
 կրելի⁴, եւ կենդանի մնալն՝ նովաւ է, որ եւ
 սա՝ ըստ իւր կրիցն, ի լրումն չափոյ չարեացն
 հասեալ էր, զորս թուէ առաքեալ ի թուղթսն
 Հոռոմայեցոց ըստ կարգի, ասէ ցնա կամքն՝
 որ հաճեալ է ընդ օրէնսն Աստուծոյ, թէ ոչ
 կարես վաղվադակի, ի չար սովորութենէդ՝

³ Բն. ձէթ:
⁴ Կերակրելի (°):

